Արձանագրություն N 2

Ազգային ժողովի կարիքների համար ձմեռային անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/18 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19 | 28.07.2025թ.
ժամը՝ 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Վ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ս. Սարգսյան, Գ. Հարությունյան, Հ. Հարությունյան
Նիստից բացակայում է՝	Տ. Բաղալյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ.Թադևոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	ավտոմեքենաների անիվներ	480000
2	ավտոմեքենաների անիվներ	520000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 25.07.2025թ.-ին ժամը 12:00-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 28.07.2025թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ	ք.Երևան Գայի պողոտա 31/34	098815665	bghda88@gmail.com

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/18 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ	142000000000	20 %	170400000000	142000000000	20 %	170400000000	Մերժված
2	ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ	142000000000	20 %	170400000000	142000000000	20 %	170400000000	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 28.07.2025թ.-ին

7. Տեղեկություն Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աճուրդն ամփոփվելու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցել է Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը և Համակարգի կողմից մերժվել է վերջիններիս հայտերը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

7.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել չկայացած:

7.2 Հաստատել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/18 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Վարդան Հարությունյան

անդամներ՝ ---------- Սարգիս Սարգսյան

---------- Գարիկ Հարությունյան

---------- Հրայր Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Հեղինե Թադևոսյան